

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՎԱՇԵ ՀՈԿՈՔՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ
ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ սյունեցիներ,

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ:

Այս տոնական օրը ես, նախևառաջ, գլուխ եմ խոնարհում հանուն հայրենիքի ազատության նահատակված բոլոր քաջ հայորդիների պայծառ հիշատակի առջև: Հավերժ փառք ու պատիվ մեր հերոսներին:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտը մեր ժողովրդի առջև բացեց խաղաղ, ստեղծագործ աշխատանքի, երկրի շենացման և պատմական վերածննդի նոր դարաշրջան:

1992 թվականին Շուշիի ազատագրումով մայիսի 9-ը ձեռք բերեց կրկնակի խորհուրդ՝ իրենց հայրերի ու պապերի սխրանքին միավորելով նոր սերնդի արժանապատիվ կեցվածքը: Այն դարձավ մեր նորագույն պատմության փառավոր էջը և իր ազգայինը պաշտպանելու՝ հայ ժողովրդի վճռականության առհավատջան:

Շնորհավորում եմ բոլորիս մայիսյան այս մեծ տոնի առթիվ՝ մաղթելով բարօրություն, ոգու արիություն և խաղաղ երկինք:

ՀՀ Սյունիքի մարզպետ Վ. Հակոբյան